

որ նոյն երանելին հաւն իմ Գրիգոր պատրիարքն ի ՌՃԴՀ (= 1749)ին և Փետրվարի փոխցաւ առ Տէր, որոյ զհոգին լուսաւուրեսցէ Տէր երկնայնով լուսով։ Զինի զնացացք հրաւիրակի ի Պօլիս և եկաք, և հրամանաւ Յակոբ պատրիարքի սրբոյ աթոռոյս զնացաք նվիրակ յև դոկիա և ի Սուրբ Էջմիածին հրաւիրմամբ Մինասոյ կաթուղիկոսի Ակընցոյ, եւ զգործն կատարեալ Աստուծով եկաք ի սուրբ գահն յաւուր Թէոգորոս պատրիարքին։ Որ և զինի մի տարւոյ յղեաց զմեզ ի յիզմիւռին Լիկայացոց, որ է Փոքրն Ասիւայ, որ և մինչ էաք ի Նիկոմիդեայ՝ լուաք զմահն Թէոգորոս պատրիարքին, որ և լրացուցեալ զգործս Աստուծով, ընդ Պօլոյ նաւել Թշարդապետով եկալ մատաք ի սուրբ գահն՝ մեր սիրիի Համբանցի Սարգիս հրաւիրակ վարդապետիւ, որ և զմեզ յոյժ սիրով ընկալաւ Կարապետ պատրիարք եղբայրն իմ, ծերունիքն բոլոր և եղական սիրելի եղբայրն իմ Եւղոկիացի Սարգիս արքեպիսկոպոսն Ֆէրմանցատէ կոչեցեալն, որ և սիրով ըզ-

լուծն գարպասի վերակացութեանն ի պարանոցն մեր անցուցին, և մեք Աստուծով և օժանդակութեամբ եղբարց ի ՌՃԴՀ (= 1762) ի Հոկտեմբերի մԴ օրէն մինչ ի ՌՃԴՀ (= 1768) եւ ի յԱպրիլի ամիսն ի յանդ և ի յաւարտ հասուցաք։ Եւ ի լինելն մեր պատրիարք կամեցողութեամբն Աստուծոյ և ստիպմամբ բոլորից, որպէս գրեալ եմք ի մեծ տէֆտէրոջն տարեկանի իրատի և մասըրաքի ըստ ամենայնի, զմելը սիրելի զեղբայրն զեւզոկիացի Սարգիս աստուծաբարոն վարդապետն եղի գարպասոնի բերելով յիզմիւռոյնը լիզիրակութենէն, մինչ չև էր զգործն զայն կատարեալ վասն հարկաւորութեանն, որ և նարդենիս յաւելացուցաք նաև զգէքիլութիւնն ի վերայ, զի միւսն ինքնին հրամարեցաւ, և Տէր Աստուծած իւրն եւ օգնականաց եւ ամենայն մտերիմ զործակալաց և բոլոր միաբանից կարօղութիւն տացէ և վարձահատոյց լիցի, ամէն։

Հրաւարակից Մ. Ե. Ն.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱԽՏԱՆԳ ՈՐԴԻ ՈՒՄԵԿԱՅ ԵՒ ՆՈՐԱ ՏՈՂՄԸ

Պ.

Ումեկեան տօհմը, այսպէս անուանենք Վախտանգի հօր անունով, որ ամենից յայտնի ներկայացուցիչն էր, արեւելեան Հայաստանի բնիկ իշխաններից չէր, այլ եկուոր Մանազկերտի շրջանից։ այս մասին մեզ մանրամասնութիւններ են տալիս Վարդան և Գանձակեցին։ Առաջինը յայտնում է 1242 թուականի համար։ «Ի վիշնարիւր իննառւն և մի թուին Հայոց Բաշու նուրինն փոխեաց զիշխանութիւն Զարմաղանին և էառ զԿարնոյ քաղաք՝ հանեալ անտի զայրն երեւելի, մհծատուն և երկիւղած ի Տեհանէ զԱւմենին և զազգականոն նորա՝ զորդիս պարոն Յահաննու զՍտիփաննոս և զեղբարսն իւր հինգ» (*)։ Ուրիշ աղբիւրից էլ զիտենք, որ Թաթարների ար-

շաւանքը դէպի Կարին և Փոքր Ասիայի քաղաքները՝ կեսարիս և այլն սկսուած էր 1242 թուին։ Գրիգոր Դոփիան, որ միւս հայ իշխանների հետ՝ Աւազի զիշխառութեամբ՝ մասնակից էր այդ արշաւանքին, պատմում է անձամբ մի յիշտակարանի մէջ (*):

Իսկ Գանձակեցին առանց թուականը յիշելու Ումեկի հււոխսային Հայաստան փոխադրութիւն ու Տփխիսում հասատատութիւլը կապում է թաթարական հարկապահաննութեան պատմութեան հետ, որ կատարուել է Մանզու Խանի հրամանով «յեօթն հարիր եւ երեք թուականին Հայոց» (= 1254). Թուելով հարկապահաննութեան ծա-

(*) Օթարիխսայի (Ենինականի մօտ) աւետարանի պահպանակ մեր Զեռագիրների Ցիշատակարանների ժողովածու, անտիպ։

(*) Էմինի հրատ. Մոսկա. 1861 երես 193։

50

նըր կոզմիկը զանագան դասերից, աւելացնում է. Անաև ի վաճառականաց բաղում ինչս շահեալ, կուտեցին զանձս սաստիկս սոկոյ եւ արծաթոյ եւ ականց պատուականաց. և այսպէս զամենեսեան սզացուցեալ, եւ վայիւ եւ աշխարօռ լցեալ դաշխարհն թողին չար սատիկանս ի վերայ աշխարհաց զնոյն պահանջել յամենայն ամի, նովին համարով եւ զրով: Բայց մեծարեցաւ ի նոցանէ այր մի մեծատուն վաճառական Ռւմեկ անուն, զոր ինքեանք Ասիլ կոչէին, այր բարեկործ, զոր երրեմբ յիշատակեցաք, որ ապրեցաւ յաւերին կարնոյ քաղաքի ի Թաթարոյն հանդերձ որդւովքն՝ Յովինաննաւ եւ Ստեփանոսիւ, եւ եղբարք իւրովք. եւ էր յայնժամ ի Տրփիսիս քաղաքի բնակութիւն կալեալ, եւ հայր անուանեալ Թագաւորին Վրաց Դաւթի, եւ մեծարեալ ի զանէն զրով, եւ յամենայն աւագանուոյն: Աս առատ տուր ետ Արզունին, և որ ընդ նմա, և մեծարեցաւ յոյժ ի նոցունց: Բայց յեկեղեցականաց ոչինչ առին հարկս, զի չունէին հրաման ի զանէն: Նոյնակս եւ որդիքն Սարաւանին՝ Շնորհաւերն և Մկրտիչն ընչաւէտք և մեծատունք ^(*):

Աւմսկը հաստատուելով Տփխիում ,
ինչպէս երկում է Գանձակեցու այս տե-
ղեկութիւններից , գոճառուկանական մեծ
զործունէութիւն ունէր թաթարուկան պե-
տութեան սահմաններում . եթէ խանը զրով
մեծարել էր նորան , Վրաց Դաւիթ թա-
գաւորի կողմից «Կայր» կոչուել և Ար-
զունի նման ջար» ոստիկանից «յոյժ մե-
ծարանք» վայելել , ապացոյց է , թէ Աւմս-
կի դիրքն ազգեցութիւնը շատ բարձր էր
իւր հարստութեան , հաւանօրէն և խելքի
ու ճարպիկութեան շնորհիւ :

Նորա շինաբարական դործունէութեան
մասին աւելի բան չզիտենք, քան ինչ եր-
պընկացին է հազորդում իւր նախադրու-
թեան մէջ, բայց ձեռք է բերում հիւսի-
սոցին Հայաստանի նշանաւոր վանքերից
մէկը՝ Գետիկ, որ Գոշ Միթթարի շինածն
էր, եւ գտնուում էր Իւանէի պետութեան
մէջ, հաւանօքէն գնելով Աւագից, ինչպէս
Պառ Խաղբակեանը՝ Վասակի որդին, գնել
էր Այրից կամ Գեղարդայ վանքը զարձեալ

Նոյն իշխանից իւր կայքով ու կալուածաներով (*): Այս մասին պատմում է Ռւմիկի միւս որդին Ճարլը՝ Գետկայ վանքի իւր մէծ արձանագրութեան մէջ:

Յուսպէ ողբրնուրեամբ Ասունծոյ և Ճարս
որդի պարու Ռւմիկին, քռու Ճարիկ, աշխար-
հաւ Մանածկերտացի յաշխարհակարուրեամ Դա-
րա Նուիկ ի քաջառուրեան Վրաց Գևանդը
Բագրատունց իմ հայրն Ռւմիկ զննազ էր զԴե-
շիկ ի խո. Կարմիր տուգասի. և Ճարս ցրեցի(?)
զՀովի իւր առն ասհմանամ ի դառն Ճամա-
նակի, որ հայրենիքն աման էր եւ ուղին քանկ-
դո. Կարմիր տուգաս, տուի Գետկայ Ասուն-
ծածնիկ իմ հոգոյ տան յիշատակ անցնչելի իմ
Ճնողաց Ռւմիկին եւ Թագուհոյ, իմձ եւ իմ
որդիաց Մրդուրին եւ իւր եղբարցն, առաջ-
նորդուրեամբ Դասագ վարդապետին. եւ միա-
քանի ասհմաննեցին զաւազ և շաբար աւրեւ,
եւ զամկի աւրեն զամկն եկեղեցին պատարազ
որչափ մեք կենդանի եմ, մեր ճնողացն լինի,
եւ յիս եից մերոց յաշխարհն, մեզ լինի:
Արդ ով զայս զեզս հանել շանայ յայս եկեղե-
ցոյն կամ զիմ յիշատակն խափանէ ով ով եւ
իցէ, որ լինիցի ի ճննդոցն Աղամայ, եղիցի
նզոյթեալ, ԶԼՅ.» (**):

Այս արձանագրութեան համեմատ Ռւեմիկեան տոհմը Մանածկերտցի էր, որ հակասութիւն չպիտի համարուի Ռւեմիկի Կարինց հիւսիսային Հայաստան կամ Տքիսիս անցնելու իրողութեան. Ռւեմիկն իբրև

(*) Մեր «Խաղբակինքն»ին եր. 102: Ղատ Գանձակեցու Դեսիկը Զարարեան եղբայրների, յատկապէս Խւանէի տէրութեան մաս էր ամրող Կայենի գաւառով (Ղուկ. հրատ. 204, 210, 242). Դրիգոր Տզայ Խաչնեցին, Ալազի տան կառավարիչը, նորանից զերեզմանատուն է խնդրում Դետկայ վանրում- այս տեղեկութիւնը հաստատում է եւ նոյն Դրիգորի մի արծանազրութեամբ նոյն վանրում (Ազգ. Հանդ. X. 28): Զաջուռ. Խաղբակինքն ղատեր Վաննու մի աւետարանը զրուած է «ի թուիս Հայոց ՌԱԱ. ի գաւառիս Կայենոյ ի զերահոչակի սր. ուխտը Դէտկայ ընդ հովանեաւ սր. ածածնիս. եւ սր. Խուսաւորչիս Դրիգորի. ճեռամբ մեղապարտ Ստեփանոսի յիշխանութիւն իշխանաց իշխանի աթարակ Խւանէի, եւ որդւոյ նորա Ալազինո. (Զեւագրաց յիշատակարանների մեր ժողովածուն, անախից): Ումենիի զնումը կատարուած պիտի լինի 1242 — 1250թ. թ., զերչին թուականը Ալազի մահուան տարին է:

(**) Զայ. Ա. 138: Եամիս. թ. 367: Բարիբուզպարեան, Արձախ. 350: Խ. Յարութիւննեան. Ազգ. Հանդ. Խ. 1903: Յարութիւննեան «Խնդ»ի փոխարէն կարծում է «ԵՄ» պիտի լինի. Նոյնպէս «զնողս փռխանակ» «զնովս»:

(*) Գանձակեցի. Հուկ. հրատ. Թիֆլիս, եր. 349:

վաճառական հաստատուած էր Կարինում, երբ Թաթարներն արշաւեցին այդ կողմերը, բայց նա ծագումով Մանածկերտցի էր, նորա տոհմի տեղափոխութիւնն էլ կապուած այդ քաղաքի մի գաղթականական կամ տեղափոխական շարժման հետ: Մի ժամանակադիր յայտնում է, թէ «Ոկթաթուականին», ուկարո էտ Զաքարի է Տաճակաց, Հայերն ի Մանձկերոյ եղան(*): Թուականն, ի հարկէ, սխալ է. Զաքարէն կարսն առել էր աւելի վազ՝ 1206-7թ. ըստ Վարդականի և Օրբէլեանի նորագիւտ ժամանակագրութեան, իսկ արշաւանքը գէպի Կարին, երբ պարտուեցաւ Սերաստիոյ սուլթանը Մուշի Առաքելոց յոյտնի Տօնակոտի յիշատակարանի համեմատ, աւելի վազ մն — ԱԾԱ. թուականին: Տարաբաղդարտր մեզ անյայտ են այս գաղթական շարժման հանգումանքները և նրանց նոր հայրենիքի կամ բնակութեան վայրը, բայց անհաւանակոն չէ, որ Զաքարիայի արշաւանքի հետ էր կապուած նրանց տեղափոխութիւնը, և զոցանից մէկն էր Ապարանիքի Խաչարձանի կոնգնող ձարը, որ կարծում ենք նոյն պիտի լինի Աւելիքի նոյնանուն հօր հետ. զուցէ և առանց դորան էլ վաճառակոնական յարաբերութեան մէջ Հայոստանի արեւելեան նահանգների և Վրաց տէրութեան հետ:

Ա՞րչափ մեծ էր Գետիկի հետ կապուած կալուածների տարածութիւնը, ըստ գիտենք. բայց, հաւանօրէն բաւական ընդարձակ էր, բարձր տրծէքից դատելով: Արձանագրութեան ճիշդ ընթերցանութեան համար ապահով չենք, քանի ձեռքի տակ չունինք լուսանկարչական պատկերը և անձամբ էլ չենք ստուգել այն, բայց հաւանական ենք համարում իս. Յարութիւնեանի նկատողութիւնը, որով մօտեցած կը լինինք ժամանակակից ուրիշ զնումների արժէքին: Հենց այս արձանագրութեան մէջ ձարը զնում է մի ուրիշ գիւղ՝ զճարելով չորս հազար կարմիր դուզատ. գործադրելով վաճառականին յատուկ լիզու. «ի գառն ժամանակի, որ հայրենիքն (այսինքն կալուածը, հողը) աժան էր և սոկին թանկ»: Ստեփանոս Օրբէլեանը իւր կրտ-

սեր եւ խորթ եղբայր Զալալից զնում է Չուայ գիւղը «իւր անն սահմանօքն», հոգով եւ ջրով եւ այգեստանեօք եւ բոլոր բնակչոք» 21,000 գրամով(*), որ հաւասար էր 2100 ոսկի զահեկանի. քիչ յետոյ կը տեսնենք, որ Ումեկի ազգականներից մէկը՝ Յովհաննու որդի Ստեփանոսը՝ զնում է օղոսուակերտ եւ զիր զեղեան, զարդին որ ի Շուեր», զմարելով 60,000 սպիտակ սուլտանի, այսինքն սելջուկեան արծաթ դահնեկան, որ հաւասար էր մօտաւորապէս 6000 ոսկի զրամի: ԱՌքան եւ հետաքըրքական լինի ու կարեւոր ճշգել ժՓ. գուրու երկրորդ կիսում զործադրուող դրամներն ու նրանց արժէքը զնումների և փոխանակութիւնների համեմատութեամբ, ընականաբար, այստեղ զբաղուել չենք կարող, կարօտ լինելով յատուկ ուսումնասիրութեան: Մեր ցուցումները միայն մօտաւոր զաղափոր պիտի տան ձարի եւ նորահօր զնումների եւ հարստութեան մասին Պատմական տեսակէտով մի հետաքըրքական երեսյթ է այս, որ Հայաստանի արևմտեան գաւառներից եկած վաճառական հարուստ ընտանիքներ կալուածներ են ձեռք բերում դրամուկան զնումներով եւ աւատական իշխանների զասում կարգւում, ինչպէս ժամանակակից միւս իշխանները: Դեմկոյ վանքում 1273 թուին գրուած ձեռագրի յիշատակարանի Մլսիթոր գրիչը այս նոր ձեռք բերուած հողային ժառանգութիւնը անուանում է «տէրութիւն» ձարի, մի արտայայտութիւն, որ զործածական էր միւս իշխանների համար. «Յամի եւթն հարիւրերորդի քսաներորդի երկրորդի թուականութեան Հասոց յորում ժումանակի հովէր(?) զուղղափառութեամբ(!) ճշմարիտ աթոռակալ լուսաւորչին մերոյ տր. Յակոբ, և յԱղուանից տր. Ստեփաննես. եւ ի տիեզերակալութեան Ապաղանին(?) եւ յանիշխանութեան մերո աշխարհիս, յաթարակութեան Սաղունին եւ տէրութեան տեղւոյս ձարին: Աստանաւր կատարեցաւ տառ մատենիս ի սր. եւ ի հոչակաւոր վանս Գետկա ընդ հովանե եւ(?) սր. Ածածնիս. . . . առ ոստ սր. եւ վըսամապայծառ վարդապետիս Յովհասարիս,

(*) Շար. Սամուել Անեցու ժամանակագրութիւն, հրատ. Ա. Տէր Միքէլեանի. Էջմ. կը. 147:

(*) Օրբէլեան. Ղուկ. հրատ. 493:

որ է ամենայնիւ աւրինակ բարեաց վարիք եւ բանիւ . . . » (*):

Ճարի արձանագրութիւնից պարզ ում է և մի այլ խնդիր, Հասան Զալալի դռւստր Մամախսաթունը Ումենիկի երկրորդ կինն էր, որից եւ կրտսեր որդին Վախտանգ. Իսկ Ճարին ու Քարիմատինը նորա ուռաջին կնոջից էին, որ ըստ արձանագրութեան թագուհի էր կոչում: Որդին երի մէջ աւազը, հաւանօքին, Քարիմատինն էր, որ ժառանգել էր հօր շինած եկեղեցին Տիմիսում, իսկ երկրորդը Ճարը, որ ստացել է Գիտիկը և իւր անձնական գնումով վերան աւելացրել Հովլը: Վախտանգի ժառանգութեան մասին տեղեկութիւն չունիք:

Քարիմատինի, Ճարի և որրա զաւակների մասին յիշատակութիւն ունինք նաև Դետկայ ուրիշ երկու արձանագրութեան մէջ. երկու եղբայրներ, որոնցից մէկը վարդապետ է, բայց անունը եղծուած եւ միւսը Կարապետ՝ «ի թվին հայոց Զի պարունութեան Արդիշ խաթունին եւ եղբարց իւրոց Արդութին եւ թա... ամուսին որդոց Քարիմատին եւ (?) որդոյ մեծին Աւմէկին ու այլ որդոյ Խաթունին» չինում են զանգակատուն այանուն սր. հրեշտակապետացն Գարբիէլի եւ Միքայէլին եւ «պարիսպ չուրջ եկեղեցոյս» (**): Տարաբաղդաբար արձանագրութեան եղծուած լինելու պատճառով մնում ենք մթութեան մէջ Արդութի միւս եղբայրների եւ Քարիմատինի անուան հետ կապուած մերձաւորների մասին: Երկրորդ արձանագրութիւնը Պետրոս վարդապետինն է, որ մի խաչ է կանգնել «պարունութեան Արդութին և Արդիշ Խաթունին» «ի թուին ԶՂԴ» (**): Արձանագրութիւններից պարզ է, որ Ճարը Արդութից և նորա եղբայրներից զատ, որ յիշուած էր նուեւ նորա միծ արձանագրութեան մէջ, ունէր և մի զուստ Արդիշ (գուցէ Խորիշահի կրծատումը) անունով, որ Արդութի հետ մասնակից էր հօր թողած «տէրութեան» իշխանութեան:

Այս հանգամանքը արժանի է առան-

(*) Զեռ. Երուսաղեմի N. 1288: Յովանափ վարդապետին յիշում է և Դանձակեցին Խաթիկի առաջնորդների շարքում. Ղուկ. հլատ. եր. 210:

(**) Ազգ. Հանդ. X. 1903, Յող. Ցարութիւննեանի:

(***) Անդ:

ձին ուշադրութեան եւ լուսաբանութեան, որ իսկապէս սովորական չէր մեր աւանդական կենցաղի և հասկացողութեան համար. Գոշ Մխիթարի Դատաստանագրքի երկրորդ մասի կԲ. եւ կԳ. զլուխները ուրոշ լոյս են սփոռում այս երեսոյթի լուսաբանութեան նկատմամբ (*). աղջիկը հօրժառանգն էր, եթէ չունէր եղբայր. Աւազի գուստը Խոշաք ժառանգեց հօր իշխանութիւնն ու կալուածները, թէն յապաւում ներով, որովհետեւ եղբայրը չունէր, նորազաւակները Սահիպ զուանի ամուսնութիւնից ժառանգում են և յիշում մօր հետկամ առանձին (**): Աղջիկը եղբայրներ ունեցած դէպքում, կէսն է ատանում եղբօր կամ եղբայրների համեմատութեամբ. մարդու զնացած աղջիկն ստանում էր հայրական տանը եղած քրոջ բաժնի կէս չուփով, բայց նա կարող էր գալ եւ իւր հօրժառանգութեան մէջ ապրիլ ստանալով լիովին իրեն հասանելիք բաժինը: Գոշ Մխիթարի կարծիքով տանը եղած աղջիկը «հաւատար եղբարցն ժառանգէ զհօրն»: Հասատատի լստ այսմ որդոց և զստերաց հաւատար լինել ժառանգութեան հօր»: Բայց սթէպէտ բաժանորդք ընդ եղբարս ժառանգութեանն քորք են, այլ ոչ ժառանգապահք», որ հրատարակիչը գրչի սխալ է համուրում եւ ճիշդ աւանդապահք», յորժամ եղբարք իցեն»:

Խորիշ խաթունի յիշատակութիւնը սրպէս տեղական պարտնութեան կամ իշխանութեան ներկայացուցիչ, կարելի է հասկանալ, երբ ընդունենք, որ նո ամուսնացած էր, եւ բնակութիւն հաստատած Դետիկում իւր որդոց հետ, և աւազը լինելով Ճարի զաւակների մէջ, յիշում է Արդութի հետ, որ իսկապէս իշխանութեան աւանդապահն» էր:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐԹԵՊՈՅ. ՅՈՎՈՒՄԻՔԵԱՆ

Շարունակելի

(*) Բաստամեանի հրատարակութիւն, էջմ.:

(**) Օրբէլ. Ղուկ. հրատ. 412, 418: Եահի. թ. 163, 183. Այրարատ Ալիշանի. 273, 292: Գառնին եւ Հաւուց թարը նոյնպէս ենթարկուած էին նրանց իշխանութեան. Զեռ. էջմ. N. 2838 զրուած է. 1207 թուին Հաւուց թարում «ի մերոյ նահանկի աւրութեան Խոշարի եւ Զարարիայի որդոյ նորին»: Տես եւ «Հովիտ» 1910. 122: